



The Armenian Center  
for National and International Studies

Ռազմավարական և ազգային հետազոտությունների  
հայկական կենտրոն

Армянский центр стратегических и  
национальных исследований

**ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՄՆ-ՈՒՄ**

**ONE YEAR LATER: THE PSYCHOLOGY OF  
COMPARATIVE CHANGE IN ARMENIA AND THE US**

մարտ 2009թ.  
Երեւան

Ներկայացված տեսակետները միմիայն անհատ հոդվածագիրներինն են, և կարող են չհամընկնել կենտրոնի դիրքորոշումների հետ:

© 2009, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն:  
Հոդվածի կամ նրա առանձին հատվածների հրատարակումը առանց ՌԱՀՀԿ-ի գրավոր թույլտվության արգելվում է:

© 2009, Армянский центр стратегических и национальных исследований.  
Публикация статьи или отдельных ее частей без письменного разрешения АЦНИ запрещена.

© 2009, Armenian Center for National and International Studies.  
This publication may not be reproduced or published, in whole or in part, without the express written consent of the Center.

**ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**Մարտ 2009**

**MONOGRAPH**  
**March 2009**

---

**Սյուզաննա Բարսեղյան**  
**Արմինե Ղազարյան**  
**Ռիչարդ Կիրակոսյան**

**Syuzanna Barseghian**  
**Armine Ghazarian**  
**Richard Giragosian**

**Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների  
հայկական կենտրոն**

**The Armenian Center  
for National and International Studies**

Հոդվածագրի տեսակետները կարող են չհամընկնել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:

© 2009, Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն  
Հոդվածի կամ նրա առանձին հատվածների հրատարակումը  
առանց ՌԱՀՀԿ-ի գրավոր թույլտվության՝ արգելվում է:

© 2009, Армянский центр стратегических и национальных исследований  
Публикация статьи или отдельных ее частей  
без письменного разрешения АЦНИ запрещена.

© 2009, Armenian Center for National and International Studies  
This publication may not be reproduced or published, in whole  
or in part, without the express written consent of the Center.

# ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՄՆ-ում

## Նախաբան

Մարտի 1-ի ողբերգական իրադարձություններից հետո Հայաստանը շարունակում է դիմակայել չլուծված հետընտրական ճգնաժամի երկարատև ազդեցությանը: Չնայած նրան, որ խթանված են 2008 թվականի փետրվարին կայացած նախագահական ընտրություններով, որոնք լայնորեն քննադատվեցին ազատ եւ արդար չլինելու համար, Հայաստանի հետընտրական ճգնաժամի հիմնական պատճառներն իրենց մեջ ներառում են մի շարք չլուծված խնդիրներ՝ լայնացող սոցիալ-տնտեսական անհավասարությունից մինչև ակնհայտ քաղաքական բեւեռացում:

Անմիջապես ընտրություններին հաջորդած օրերի ընթացքում տեղում ձեռնարկված միջոցառումները մեծապես անսպասելի էին: Ինքնաբուխ հանրահավաքներն ու ընդդիմության կազմակերպած ցույցերը՝ որպես «ժողովրդական շարժում», Հայաստանի իշխանությունների կողմից ընկալվեցին իբրև իրենց իշխանության սպառնալիք եւ իրենց հեղինակությանն ուղղված մարտահրավեր: Սա իր մեջ պարունակում էր վտանգավոր անհեռատեսություն, չնայած խաղաղ եւ օրինապահ ցույցերը պետք է ընկալվեն որպես առողջ եւ դիսամիկ ժողովրդավարության նշան, որտեղ անհամաձայնությունը եւ, նույնիսկ, օրենքի շրջանակներում գործող ընդդիմությունը հարգված են:

Այսպիսով, ընտրական գործընթացը եւ հետընտրական ճգնաժամի առկայությունը կարելորդվեցին ավելին, քան իրական արդյունքները: Եվ ի տարբերություն մյուս ընտրությունների, 2008 թվականի նախագահական ընտրարշավը Էապես տարբերվում էր, քանի որ հասարակական անտարբերությունը վերանում էր: Այս երեւույթն առավել ակնհայտ դարձավ վերջին մի քանի տարիների ընթացքում կուտակված եւ աճող սոցիալական դժգոհության հենքին, սակայն այն բռնկվեց միայն նորովի միավորված ընդդիմության ի հայտ գալով, որն իր հետ բերել էր «փոփոխության օրակարգ»:

Այս փոփոխության օրակարգը կարելորդվեց իշխանությունների՝ «գաղափարախոսական իմաստը ոչնչացնելու» ռազմավարության, հասարակական եւ քաղաքացիական ակտիվությունը թուլացնելու եւ պառակտելու դեմ պայքարով:

Այս ռազմավարությունն արդյունավետ էր ավելի խորը եւ միասնական գաղափարախոսության զարգացումը կասեցնելու համար եւ ուղղված էր ընդդիմության՝ հասարակության սոցիալական եւ քաղաքական բեւեռացումն օգտագործելու կարողությունները սահմանափակելուն:

Այս համատեքստում Հայաստանում եւ ԱՄՆ-ում համեմատական փոփոխության հոգեբանության հետաքրքիր գուգահեռներ կարելի է տանել: Հայաստանի դեպքում քաղաքական փոփոխության հոգեբանության շարժիչ ուժը ժողովրդի արթնացումն է, իսկ սահմանումը՝ անտարբերությունից եւ պասիվությունից հոգնած բնակչությունը: Ամերիկյան քաղաքականության դեպքում Բարաք Օբամայի նախագահական արշավը նույնպես ներկայացրեց փոփոխության օրակարգ, որն ուղղված էր բնակչության մեծամասնությանը՝ խոստանալով Բուշի աշխատակազմի ութ տարիներից հետո փոխել ուղղությունը: Եվ որպես փոփոխության թեկնածու՝ Օբաման ի վիճակի եղավ միավորել եւ արթնացնել Ամերիկայի ժողովրդին, որը ներգրավված չէր քաղաքականության մեջ եւ բավականին անտարբեր էր դարձել:

Սակայն Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմամբ եւ անվտանգության կայունությամբ շահագրգռված բոլոր կողմերի համար կարելու մարտահրավեր է այն փաստը, որ ճգնաժամը բավականին հեռու է լուծված լինելուց: Հավասարապես անհանգստացնող է նաեւ, որ կան կենսահույզ մի շարք չլուծված հիմնախնդիրներ, որոնցից հատկապես արժե նշել ունեցվածքի անհավասարության աճը եւ արմատավորված կոռուպցիան:

Իշխանությունների համար նոր քաղաքականության մշակումը ճգնաժամի հաղթահարման հրատապ միջոց է, որն ունակ պետք է լինի էական փոփոխություն կատարել, եւ արտացոլել նոր քաղաքական ու սոցիալական իրականությունը, եւ Հայաստանի հասարակության բոլոր կողմերի ներգրավվածությամբ ձեռնամուխ լինել անկեղծ քաղաքական երկխոսությանը: Ընդդիմության համար նույնպես անհրաժեշտ է ընդունել երկխոսության անհրաժեշտության փաստը՝ հաշվի առնելով վերազարթոնք ապրող բնակչության սպասելիքներն ու պահանջները:

Մարտի 1-ից մեկ տարի անց արդեն հստակ է, որ հիմա Հայաստանը կանգնած է կարելու շրջադարձի առջեւ: Հասարակական հանրահավաքների ժամանակը կարող է ավարտվել, սակայն հիմա արդեն ժամանակն է Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու համար ներգրավվել քաղաքականությանն ու ռազմավարությանը վերաբերող առողջ եւ օրինական քննարկումների մեջ: Ամենից կարելուն այն է, որ անհնար է վերադառնալ նախկինում եղած ստատուս քվոյին, սակայն պետք է լինի փոխակերպում՝ ժողովրդական բողոքից դեպի քաղաքական ներգրավվածություն կամ մասնակցություն: Հայաստանի «ժողովրդական քաղաքացիները» պետք է հնարավորություն ունենան դառնալու գործուն դերակատարներ, այլ ոչ թե քաղաքական համակարգի կրավորական հանդիսատեսներ:

## 2008-ի ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

### *Սյուզաննա Բարսեղյան*

2008թ. ՀՀ նախագահական ընտրությունները կարելի է համեմատել 1991թ.-ից հետո բոլոր նախագահական ընտրությունների հետ. ինչպես միշտ՝ խոստումներ ու նոր սպասելիքներ ընտրություններից ու թեկնածուներից, իշխանական եւ ընդդիմադիր թեկնածուներ, բազմազանություն ապահովող ու տեղեկատվական դաշտը զբաղեցնող այլ թեկնածուներ, անհավասար քարոզարշավ, ՉԼՄ-ների միակողմանի իշխանամետ լուսաբանում, իշխանական թեկնածուի միանշանակ հաղթանակը վկայակոչող սոցիոլոգիական տարբեր հարցումներ՝ իրականության հետ ակնհայտ անհամապատասխանությամբ, թեկնածուների՝ միմյանց «ոչնչացնելու» մարտավարություն, ընտրական քարոզարշավի խոչընդոտներ, քարոզարշավի վրա ծախսվող գումարների անվերահսկելիություն, ընտրակաշառք, վարչական լծակների օգտագործում, կեղծիքներով ու բռնությամբ ուղեկցվող ընտրական գործընթաց, ընտրությունների պաշտոնական արդյունքների հետ անհամաձայն ընդդիմություն, բողոքարկում, դիտորդների եւ միջազգային կառույցների դրական գնահատական, հանրահավաքներ, իշխանությունների կողմից բռնության գործադրմամբ դրանք «ցրում» **(աննախադեպը, թերեւս, ուժի կիրառման խստությունն էր եւ 10 զոհերը)**:

2008-ի նախընտրական եւ ընտրական ողջ գործընթացը նույնպես ընթանում էր այս տրամաբանությամբ: Սակայն այս ընտրություններն առանձնահատուկ էին հենց նրանով, որ ողջ նախընտրական եւ հետընտրական շրջանը չուղեկցվեց ապատիայով, ինչպես նախորդ նախագահական ընտրությունների ժամանակ: Իսկ հետընտրական փուլում սկսվեց քաղաքացիական-հոգեբանական մի գործընթաց, որը իշխանությունը փորձեց սահմանել պետական իշխանության յուրացում, հեղափոխության փորձ, իսկ ընդդիմությունն այն անվանեց համաժողովրդական շարժում:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում 1991թ.-ից հետո նախագահական բոլոր ընտրություններն անցել են նույն տրամաբանությամբ. ընդդիմությունը (ըստ ոչ պաշտոնական տվյալների եւ նույնիսկ հասարակության գիտակցության մեջ) միշտ հաղթանակ է տարել իշխանական թեկնածուի հանդեպ, սակայն ընտրությունը կատարվել է ոչ միայն եւ ոչ այնքան **ի պաշտպանություն** տվյալ ընդդիմադիր թեկնածուի, այլ **ի հեճուկս** իշխանականի, ոչ թե «**համար**», այլ «**ընդդեմ**» կար-

գախոսով: Կարելի է ասել, որ ՀՀ քաղաքացին անկախության տարիներին (բացի 1991թ.) ընտրությունների միջոցով հնարավորություն չի ունեցել ընտրելու իր նախընտրած առաջնորդին, այսինքն նա չի ընտրել, այլ քվեարկել է այս կամ այն թեկնածուի օգտին: 2008-ի նախագահական ընտրությունները հենց առանձնացան նրանով, որ քաղաքացին վերջապես զգաց, որ ինքը կարող է շատ բան փոխել. քաղաքացին, հասարակությունը դարձան քաղաքական կյանքի գործոն: Իհարկե, դա ողջունելի է, սակայն այդ գործոնը պիտի լինի ուժեղ եւ ինքնուրույն, որպեսզի այն չհարկվի քաղաքական նպատակներով, չօգտագործվի նպատակահարմարության համար:

Վերջին տարիներին Հայաստանի սոցիալ-քաղաքական իրավիճակի բավականին կայուն բնույթի եւ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի հավասարակշռվածության մասին իշխանությունների կողմից, տարբեր հետազոտությունների արդյունքներով եւ ՉԼՄ-ներով մատուցվող տեղեկատվությանը հակառակ՝ հասարակությունում (համենայնդեպս՝ նրա զգալի հատվածի շրջանում) հասունացել է դժգոհություն, թե ինչպես են ընթանում երկրի գործերը, հատկապես՝ սոցիալ-տնտեսական ոլորտում: Չնայած պետական վիճակագրական տվյալները վկայում են, որ վերջին տարիներին գրանցվում է երկնիշ տնտեսական աճ, սակայն հայաստանցիների մեծամասնության նյութական հնարավորությունների եւ սոցիալական ինքնազգացողության մեջ քիչ բան է փոխվում դեպի դրական կողմը:

Հարկ է նշել, որ հասարակության մեջ աճող դժգոհությունն իր գազաթնակետին է հասել ընտրություններից առաջ եւ հետո, սակայն այն առկա է եղել տարիների ընթացքում, բայց հայտնվեց առաջնորդ՝ ճիշտ տեղում եւ ճիշտ ժամանակին, եւ այդ դժգոհությունը դրսևորվել է նոր «օրակարգով» եւ այն արհեստական չէ՝ դրդված կամ փաթաթված որեւէ մեկի կողմից: Ինչպես ցույց են տալիս Հայաստանում իրականացվող տարբեր հետազոտությունները, այս կամ այն խնդիրների վերաբերյալ հասարակական դժգոհությունն առկա է մշտապես եւ կտրուկ փոփոխություններ չի կրել ընտրական ժամանակահատվածներում: Այսպես՝ դժգոհության մեծ տեսակարար կշիռ կա ժողովրդավարական զարգացումից: Քաղաքացիների մեծ մասը համարում է, որ երկրի գործերն ընթանում են ոչ ճիշտ ուղով, տնտեսական աճը չի ազդել քաղաքացիների կենսամակարդակի վրա, ավելին՝ սեփական ընտանիքի ֆինանսական դրությունը մեծամասնությունը գնահատում է որպես բացասական փոփոխություններ, քան՝ դրական: Հասարակական մեծ դժգոհությունը պայմանավորված չէ միայն սոցիալ-տնտեսական իրավիճակով, այլ նաեւ երկրում ժողովրդավարության զարգացման ուղեգծով: Քաղաքացիների մեծամասնությունը դժգոհ է ժողովրդավարական բարեփոխումներից:

Հայ հասարակության համար զուգահեռաբար սկսել է ձեւավորվել փոփոխությունների պահանջմունքը, ինչն առաջին հերթին պայմանավորված է ակնհայտ դրական փոփոխությունների բացակայությամբ: Միաժամանակ շարունակաբար եւ բավականին կայուն ձեւով իշխանությունների կողմից տարվում է «ապագադափարականացման» միտում, ինչը հանգեցնում է այս կամ այն ուղղություններին հարող մարդկանց թվաքանակի կրճատմանը, ինչն էլ իր հերթին նվազեցնում է քաղաքական-քաղաքացիական ակտիվությունը: Այդ իրավիճակում չափազանց դժվարանում է ձեւավորել որեւէ համախմբող գաղափարախոսություն, որը կարող է ներդաշնակորեն ներառել տարբեր քաղաքական-գաղափարական կազմավորումների եւ կարելորդ՝ դառնալ «մեծամասնության» գաղափարախոսությունը: Հասարակության հատվածականության երեւույթը պայմանավորված է նաեւ քաղաքական դաշտի ծայրահեղ բեվեռացմամբ, ինչպես նաեւ սոցիալական բեւեռացմամբ՝ հարուստների ու աղքատների, այսպես կոչված՝ միջին խավի չձեւավորմամբ:

Նկատի առնելով վերոնշյալ իրավիճակը (ապատիա), թերեւս, իշխանությունները հավանական է են համարել, որ լուրջ անկայունություն եւ ընդդիմադիր տրամադրությունների ժայթքում կլինի, եթե նույնիսկ երկրում վատանա սոցիալ-տնտեսական իրավիճակը: Նշյալ մտայնությունը համոզմունք է առաջացրել առաջին հերթին՝ քանի որ ակնկալվել է, որ չկա որեւէ սուբյեկտ, ով ի վիճակի կլինի խտացնել, կուտակել հասարակության բողոքական, ընդդիմադիր ներուժը, երկրորդ՝ քանի որ ընդդիմանալու առարկան այդքան էլ ակնհայտ չէ եւ հասկանալի չէ, թե ով է իրականում պատասխանատվություն կրում այս կամ այն գործողությունների (կամ դրանց բացակայության) համար: Երրորդ՝ քանի որ «բարեփոխումների» ողջ ընթացքում հայաստանցիները կուտակել են ամենատարբեր արտակարգ իրավիճակներում գոյատևելու հարուստ փորձ, եւ այսօր շատ քիչ բան կարող է դրդել նրանց ակտիվ ընդդիմության եւ որեւէ վճռական ինքնահամարագվող գործողությունների՝ ողջ երկրի ընդգրկմամբ, իսկ պերմանենտ ընդդիմադիր ակտիվության դրսեւորումները չեն կարող լուրջ ազդեցություն ունենալ երկրում ձեւավորված մթնոլորտի վրա:

Քաղաքացիական չկայացած հասարակության անդամներն անտարբեր են քաղաքական գործընթացների, սեփական իրավունքների ոտնահարման դեպքերի, սոցիալական արդարության եւ այլ հարցերի հանդեպ: Ապատիայի վիճակում հայտնված հասարակությանը շատ հեշտ է մղել կոռուպցիայի: Սակայն մեր հասարակությունը մի տարօրինակ վարքագիծ ունի. նա նպաստում է ընտրակեղծիքներին, ընտրակաշառքներին, սակայն միաժամանակ կեղծված ընտրությունների հետ չհամակերպվելով՝ դուրս է գալիս պայքարի: Եթե իշխանություն-

ները վարչական լծակներից բացի չունենան մարդկային ռեսուրսներ, ում վրա կարող են հենվել, ապա կեղծիքների հնարավորությունը անհամեմատ կնվազի: Ընդդիմադիր առաջնորդի խնդիրը պետք է լինի նաեւ ուղղորդել մարդկանց ոչ միայն նախընտրական փուլում՝ ձայներ ստանալու, եւ հետընտրական փուլում՝ պայքարի աջակցություն ստանալու, այլեւ շատ ավելի մեծ եւ ընտրություններից շատ ավելի առաջ՝ դարձնելով նրանց *գործոն, այլ ոչ թե գործիք*:

Սակայն 2008-ի նախագահական ընտրությունների շուրջ ծավալված իրադարձությունների զարգացումները տարբերվեցին այս առումով. ընդհանուր առմամբ՝ տպավորություն էր ստեղծվել, որ այսօրվա Հայաստանում շատերը համակերպվել են բողոքի ցանկացած ձեւի եւ հասարակական-քաղաքական կյանքում մասնակցության անօգուտ լինելու հետ եւ կյանքի լավագույն ռազմավարություն են ընտրել ձեւավորված կարգերին հարմարվելը: Սակայն քաղաքացիների մեծամասնությունը ցույց տվեց, որ չի պատրաստվում այլեւս ապրել այդպես: Նրանք ցուցադրեցին բավական կենսաուժ, փոփոխությունների եւ քաղաքականության մեջ ինքնահիացման ձգտում:

Սակայն ամենամեծ մտահոգությունը հետեւյալն է. հիասթափությունը, որը կարող է առաջանալ ապատիայի վիճակից արթնացած զանգվածի շրջանում, վտանգավոր է ողջ հասարակության համար: Եվ անհրաժեշտ է դասեր քաղել նման զարգացումներից: Կարելուր հետեւությունն այս գործընթացից այն էր, որ ընդդիմադիր նման գործելակերպն այլեւս օրինակ չի կարող լինել նոր ընդդիմության համար: Նոր ընդդիմություն, որն անհրաժեշտաբար պետք է առաջանա եւ լինի բոլորովին այլ որակի, այլ մոտեցումներով եւ ոճով: Մյուս կողմից էլ՝ հասարակական գիտակցության մեջ այնքան է արմատացել ընդդիմադիրի նմանօրինակ «կերպարը»՝ խիստ ծայրահեղ (ռադիկալ), զգայական, իշխանական յուրաքանչյուր գործ եւ գործողություն հերքող, որ դրանից տարբերվող՝ ավելի ոչ ծայրահեղ, ոչ զգայական, հստակ ծրագրերով, իրատեսական մոտեցումներով առաջնորդը կամ քաղաքական ուժը **շատ մեծ դժվարությամբ կզբաղեցնի «նոր ընդդիմության» իր տեղը:**



## ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### *Արմինե Ղազարյան*

#### **Հայաստանում ընտրական մշակույթի առանձնահատկությունները**

Հայաստանում առկա ընտրական մշակույթն ունի իր հստակ առանձնահատկությունները: Ընտրությունների անբաժանելի մասն են կազմում անհավասար պայքարի համար բոլոր լծակները՝ իշխողից մինչեւ ծանոթներ, հարազատներ, թաղային եւ ոչ թաղային հեղինակություններ, ընտրակաշառքներ, ահաբեկումներ, ընտրատեղամաս ուղեկցություններ, ընտրակեղծիքներ՝ պարզագույնից մինչեւ վերջին նորամուծությունները: Վերջերս այդ մշակույթն ամբողջացել է եւս մի քանի համալրումներով՝ մեծաքանակ պարտեկային ոստիկանների եւ ՀՀ ոստիկանության Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության (6-րդ վարչություն) աշխատակիցների՝ «կարմիր բերետավորների» ներկայությամբ, որոնք 2004-ի ապրիլի 12-ից հետո, երբ Բաղրամյան պողոտայում «քշեցին» ընդդիմության հանրահավաքի մասնակիցներին, դարձել են քաղաքական մշակույթի շատ կարեւոր բաղադրամաս:

Սարսափելի բացասական հոգեբանական ազդեցություն է ունենում քաղաքում հատուկ ջոկատայինների ներկայությունը: Եվ հուզական, եւ բանական մակարդակներում տպավորությունը սարսափազդու է, վախի զգացողությունը՝ ակնբախ: Ուժային կառույցների ավտոմեքենաների առկայությունը ժողովրդի մեջ սադրանքի եւ անպաշտպանվածության զգացողություն է առաջացնում: Վախի այդպիսի մթնոլորտ հաջողվում է ստեղծել եւ այն նպատակահարմար է, քանի որ.

- կլինեին բնակիչներ, որոնք չեն մասնակցի ընտրություններին՝ փորձանքից հեռու մնալու սկզբունքով, որոնց քվեաթերթիկները կօգտագործեն
- ինքնըստինքյան իշխանական «ճնշող» PR է թեկնածուներից մեկի օգտին:

Հայաստանում ցանկացած ընտրություն (ՏԻՄ-ից մինչեւ նախագահական) հաստատել է հատուկ բանաձեւ եւ քրեական կարգուկանոն՝ կարեւոր չէ, թե ով է ընտրվում՝ գող, խուլիգան, անգրագետ, միայն թե **իշխանական թեկնածուն լինի**: Այսպես, ՀՀ-ում ընտրություններով հաստատվեց **իշխանությամբ իշխանություն ձեւավորելու ավանդույթ**:

## Յետընտրական քաղաքական դաշտում ընդգծված կարծրատիպերը

Յետընտրական շրջանում կատարված իրադարձությունները հասարակության մեջ ամրապնդեցին արդեն իսկ գոյություն ունեցող որոշ կարծրատիպեր, որոնք վտանգավոր են եւ քայքայիչ միտումներ ունեն փոքր ժողովրդի համար: Հասարակության այն մասը, որն անմիջականորեն հետեւել է դեպքերին կամ որեւէ առնչություն, մասնակցություն է ունեցել, առանձնացնում է «մենք» եւ «նրանք» տարաբաժանումները՝ որպես հակառակ կողմեր, օրինակ՝ «ներկա իշխանություն», «ներկա կառավարություն», «ղարաբաղցիներ», «հայաստանցիներ», «ոստիկաններ», «Հայլուր» եւ այլն: Խորանում, արմատանում են բացասական դիրքորոշումներն ու վերաբերմունքը ոստիկանության եւ, առհասարակ, պետական համակարգի հատուկ ծառայությունների ու ծառայողների նկատմամբ:

Մեկ այլ հետաքրքիր երեւույթ է ընդգծվում հասարակության մեջ՝ վարքային կարծրատիպեր, որում հստակ արտահայտված են կամային հոգեբանական մի շարք հատկանիշներ: Միտումը նույն «մենքի» մեջ միմյանց պաշտպանելու գաղափարն է՝ վարքագծի միջոցով.

1. Կա արտահայտված համարձակություն անհատական մակարդակում, անհատական վարքագծում՝ բողոք-դիմադրության երանգով:
2. Վարքային կարծրատիպեր խմբային մակարդակների. դժգոհության կազմակերպված արտահայտում, ըմբոստություն կամ խմբով՝ ըմբոստության ճնշում:

## Ազգի մեջ «թշնամու կերպարի» ստեղծում

Նախընտրական ժամանակահատվածում նպատակաուղղված ձեւով իշխանության կողմից հասարակության մեջ տարածել էին «վախի» մթնոլորտը՝ արտահայտվելու նախընտրելի թեկնածուի մասին:

Օրեր շարունակ իրականացվել են գաղափարախոսական աշխատանքներ՝ ամրապնդելով այն դրույթը, որ Ազատության հրապարակում հանցագործ զանգված է, խեղաթյուրված, աղավաղված, ներշնչվող, անգաղափար, զոմբիացվող, թմրամուլ, իրավախախտ. նման բնութագրումներով **ազգի «դիմազիծը»** ներկայացնելը հակազգային քարոզ է, ազգի հեղինակազրկում, վարկաբեկում: Նույն մարտավարությունը՝ հոգեբանական գրոհը, գործում է հետմարտիմեկյան ժամանակահատվածում, երբ պաշտոնական լրատվամիջոցները կատարվածը պարբերաբար անվանում են «մարտի 1-ի զանգվածային անկարգություններ», ինչը ենթադրում է, որ դատական համակարգում

ունեն կազմակերպված անկարգության «մեղավորներ», եւ ոչ թե այլախոհության համար ձերբակալվածներ:

Նմանատիպ քարոզչական աշխատանքները նույն ազգի հանդեպ առավել վտանգավոր են, առանց այդ էլ «հայը պակասություն չի զգում» իր ազգին ծայրահեղորեն վերաբերվելու՝ գերազնահատելու կամ թերազնահատելու, իսկ ազգի մեջ «թշնամու կերպարի» ստեղծմամբ՝ **խաթարվում է սոցիալ-հոգեբանական հավասարակշռությունը եւ ձուլվելու փոխարեն ենթագիտակցորեն միտում է առաջանում պառակտվելու** (յուրաքանչյուր հայ կձգտի խեղաթյուրված կերպարի հետ միաձուլումից դուրս գալու, «ազատվելու»՝ չկարելորելով ով, երբ, ինչի համար, ում մասին եւ ինչ պայմաններում է «կայցրել բացասական պիտակներ»):

### «Շարժման» առանձնահատկությունները

1988-ին «շարժում» էր, հսկա շարժում, ժողովրդի հոգեբանական «արթնացում»: 20 տարի հետո եւս կա «շարժում», որն այլ ենթատեքստում է «ծնվել», բայց կրկին **ունենք** ժողովրդի «հոգեբանական արթնացում»:

Առաջին շարժումն ակնհայտորեն **տեսակի պահպանման բովանդակությունն ունի**՝ ազգային համախմբում, միաձուլում, հստակ գաղափարախոսություններ, Հայաստան-Սփյուռք-Արցախ համագործակցություն: Իսկ այս շարժումն իր բովանդակությամբ տարիներ կուտակված բողոքի ժայթքումն էր, որն իր մեջ կարողացավ միավորել բոլոր դժգոհ, խնդիրներով ծանրաբեռնված շերտերին: Շարժումը գտավ առաջնորդին: Լ.Տեր-Պետրոսյանը կարողացավ հաղթահարել այն հուզական պատնեշը, որ կար իր եւ ժողովրդի միջեւ: Սակայն միեւնույն է՝ մնաց ընդդիմադիր մի հատված, մի ընտրախավ, որը կարիք ուներ նրա ապաշխարմանը, եւ այդ հատվածի միայն մի մասը մինչ ընտրությունները որոշեց նրան աջակցել, իսկ մյուս մասը՝ միայն անմիջապես ընտրություններից հետո՝ հիասթափվելով բացահայտ օրինախախտություններից: Փետրվարի 19-ից հետո Շարժման մեջ սոցիալական խնդիրների առաջնահերթությունն անցավ **հոգեբանականին**. արդարության, արժանապատվության, իրավունքների ոտնահարման համար օրեցօր համալրվում էր պայքարը, սաստկանում՝ բողոքը: Հետեւաբար շարժման ուղղությունը եւ իմաստը հստակեցվեց՝ **ժողովրդավարական «դրոշի» ներքո**: Հետագայում պայքարի ձեւն ու բավանդակությունն էլ բնականաբար պիտի համապատասխանեին «կազախոսին»:

Ակնհայտ է, որ ընդդիմության շարքերում շատերը՝ մի կողմ թողնելով անձնային համակրանքը, միացել են առաջին նախագահին միասնական նպատակի համար, ավելին, իր խոսքերով՝ «ինձ գործիք օգտագործեք՝ ազատվելու ներկայիս իշխանություններից ու նրանց ռեժիմի ժառանգորդներից»՝ մարդիկ շատ պարզ ընկալել են: Ժողովրդի որոշակի զանգված, գուցե ենթագիտակցորեն «տիրապետում է» նաեւ այն գաղափարին, որ Լ.Տեր-Պետրոսյանից իշխանությունը «ետ պահանջելը», «ետ ամենելը» ավելի «ոյուրին է», քան Ռ.Զոչարյանից եւ նրա ժառանգորդից: Այսինքն՝ ժողովուրդն օգտագործելու էր Լեւոն Տեր-Պետրոսյանին որպես իշխանափոխության «լավագույն թեկնածու» կամ «գործիք»՝ գիտակցելով, որ միայն նա կարող է պայքարել իշխող վարչակազմի դեմ, «իշխանություն» զավթած անձանց դեմ: Հետագայում՝ «գործն» ավարտելուց հետո, ժողովուրդը պայքարի սլաքը կուղղեր դեպի Լ.Տեր-Պետրոսյանը:

Ժամանակի մեջ օբյեկտիվորեն թուլանում է շարժումը, ժողովուրդը չի կարող տեսապես կլանված հետելել ընդդիմության պայքարին: Առօրյա հոգսերն ու խնդիրները լուծելու հրամայականով մարդիկ զբաղված են առաջնային պահանջմունքների բավարարմամբ: Սակայն, մյուս կողմից շարժումը թուլանում է, երբ առաջնորդը լրատվություն, խրախուսանք չի «փոխանցում» իր զանգվածին:

Մեկ տարի անց ե՛լ Շարժումը, ե՛լ արտախորհրդարանական ընդդիմության վաքրագիծը որոշակի փոփոխություններ են կրել, մասնավորապես առաջնահերթությունը քաղաքական հայացքների համար ձերբակալված անձանց ազատագրման խնդիրն է դարձել, որը նաեւ ընդդիմության եւ իշխանության «յուրահատուկ երկխոսության» կորիզն է, եւ եթե իշխանությունը չի ցանկանում այլ խնդիրների շուրջ բեւեռել ընդդիմության ուշադրությունը կամ հասարակական այլ հարաբերություններում ընդդիմության «աշխատանքը» կամ վերահսկողությունն ունենալ, ապա ամենահարմար «թեման» արդեն իսկ «ծեծված» ու հոգեբանորեն հասարակության «հանդուրժողականությունը» ձեռք բերած՝ քրեական շինծու գործերն են: Մեկ տարի անց կա Շարժումը, իսկ արտախորհրդարանական ընդդիմությունը փորձում է կայանալ՝ իր իսկ որդեգրած, որպես դրոշ գործածած **գաղափարների տրամաբանությամբ՝ ժողովրդավարությամբ**: Այսինքն՝ հին եւ «պայքարային» պաստառների փոխարեն ընդդիմությունը հրաժարվում է «արմատական» կերպարից եւ «նորոգում» է նորը՝ առավել չափավոր եւ «բանակցային» կերպարը, որն այս ընթացքում իրականացրել է խորհրդարանական ընդդիմություն «Ժառանգություն» կուսակցությունը: Հասարակության խիստ բեւեռացված ժամանակահատվածում այս երիտասարդ կուսակցությունն անդրադարձել է հասարակությանը հուզող գրեթե բոլոր հարցերին ե՛լ ԱԺ-ում, ե՛լ նրանից դուրս: Այն նոր ուժ

Ե, որը հավակնում է ընդդիմության դաշտում իր չափավոր դիրքերն ամրապնդել: Կարելոր նշանակություն ունի հոգեբանական այն առավելությունը, որ այդ ուժի անդամները, համակիրներն ու հետեւորդները քաղաքական դաշտում պատկառելի եւ հարգալից «կերպար» են վայելում: «Ժառանգությունը»՝ ընտրագանգվածը, եւ լինելով իրական ընդդիմություն, պահպանում է ժողովրդավար, ազատական, չափավոր ուժի առանձնահատկությունները: Ի վերջո, «Ժառանգությունը» շատ կարճ ժամանակահատվածում ստեղծել է խորհրդարանական ընդդիմության կերպար, որպիսին վերջին խորհրդարաններում չի եղել՝ նման «արտահայտիչ», գործուն ընդդիմադիր ուժ: Իր ստեղծած խորհրդարանական ընդդիմության կերպարով նա ժողովրդի մեջ ենթագիտակցորեն հավատ, վստահություն, դրական դաշտ է նախապատրաստում հետագա խորհրդարանական այլ ընդդիմադիր ուժերի նկատմամբ:

Նախագահական այս մեկ տարվա ընթացքում իշխանության բարեփոխումների փոխարեն՝ կադրային փոխատեղումներն ավելի են զայրացնում ժողովրդին, առավել եւս՝ տարբեր ոլորտներում նորանշանակ կադրերը գոյություն ունեցած ընտրության մեջ լավագույնները չեն: Եթե եղել է միջակ իշխանություն՝ միջակ կադրերով, ապա հիմա, ըստ փոփոխությունների՝ նշանակվող կադրերի, խրախուսվում է «վատագույնը», իսկ հասարակությունը «զգայուն» է այդ կերպարների հեղինակության, բարոյահոգեբանական առանձնահատկությունների նկատմամբ: Ներքաղաքական խնդիրների առկայությամբ, ճնշմամբ նախագահի «կերպարի» ձեւավորման խնդրի հրամայականն էր՝ Ռ.Քոչարյանի հետ հոգեբանական «երկվորյակությունից» դուրս գալու նպատակով կատարել այդ «փոփոխությունները»: Նաեւ անհրաժեշտ էր արտաքին քաղաքական ոլորտում Քոչարյանի վարած քաղաքականության մեջ որոշ սկզբունքային հարցերի նկատմամբ կտրուկ եւ հակադիր մոտեցում ցուցաբերել՝ այլախոհ քայլ նախկին նախագահից առանձնանալու համար, օրինակ՝ Թուրքիայի նախագահին Հայաստան հրավիրելը, ԼՂ հիմնախնդրի շուրջ հռչակագիր կնքելը եւ այլն:

Հայաստանի իշխանություններն ունենալով լեգիտիմության եւ ներքաղաքական խնդիրներ, «հաղթանակները» փնտրելով դրսում՝ արտաքին քաղաքականության մեջ, եւ փորձելով որպես վարչակազմ ինքնահաստատվել, գործում են ճիշտ հակառակ քաղաքական տրամաբանությամբ: Բնականաբար, ենթադրվող քայլերը չեն կարող նույնը լինել եւ նույն արդյունքներն ակնկալելի չեն, ինչն ի գորու էր ձեռք բերել **կուռ հասարակության լեգիտիմ առաջնորդը**: Սոցիալական անբարենպաստ պայմաններում էլ, միեւնույն է, հասարակության ուշադրությունն երբեմն-երբեմն կամա թե ակամա ուղղված է արտաքին հարաբերությունների ոլորտին, կարծես անվստահության արտահայտություն իշխանությունների հանդեպ: Բոլոր դեպքերում այս ընթաց-

քում իշխանության մարտավարությունն այնպիսին է, որ վերահսկվող լրատվամիջոցներով հասարակությանը ընդդիմադիր դաշտից ոչ մի լրատվություն չի փոխանցվում, այլ գրեթե միայն արտաքին հարաբերությունների հետ կապված լուրեր, վերլուծություններ, այն էլ խիստ պաշտոնական եւ իշխանության շահերով պայմանավորված: Իսկ իրական բանակցային գործընթացների պատկերը «լղոզելով»՝ հատկապես ԼՂ հիմնախնդրի վերաբերյալ, հասարակության մեջ «անորոշության», ապատիայի վիճակներ էին սերմանվում: Սակայն ԼՂ հիմնահարցը ոչ միայն արտաքին հարաբերությունների շահարկումների առարկա է, այլ նաեւ **ներքաղաքական լուծումների հիմնաքար**: Այն իշխանափոխության հիմք է եղել, եւ այդ իշխանափոխությունն անմիջականորեն առնչվում է առաջին նախագահին, ով հանրահավաքային պայքարի դադարի մասին հայտարարեց՝ կապված հենց այս հիմնահարցի հետ: Դրանից հետո հասարակության մեջ ուշագրավ էր այն երեւույթը, որն իսկապես ընդգծվում է հոկտեմբերի 17-ից հետո. համատարած հետաքրքրություն ԼՂ հիմնահարցի նկատմամբ եւ այն էլ՝ բավականին ոչ միանշանակ հույզերով, խուճապային տրամադրություններով:

Ընդդիմության հանրահավաքների կասեցմամբ զանգվածն իր բողոքը չէր կարողանում արտահայտել, «մարմանդ» դժգոհություն կար, այն փոխակերպվում էր այլ ուղղությամբ, իսկ ուղղությունը, անշուշտ, մատնանշել էր «արմատական» ընդդիմության առաջնորդը: Ուշագրավ է հակասությունը. դա զանգվածների հոգեբանական առանձնահատկություն է եւ հետաքրքրաշարժ ու արտասովոր «շրջան» է կազմում: Առաջնորդն ասաց՝ ժամանակավորապես հրաժարվում ենք պայքարից, չենք խանգարում, եւ շարադրեց «պատճառը», զանգվածը «որսաց» խայծը եւ սկսեց հետելել, «զբաղվել» խնդրով՝ **ներգրավվածության բարձր մակարդակ դրսեւորելով**: Երկիրը հեղեղվեց խուճապային տրամադրություններով, վտանգի սպասում պարունակող վերլուծություններով, մեկնաբանություններով, խոսակցություններով: Միգուցե դա ներքին սոցիալական խնդիրների արտահայտման «պաշտպանական» շերտ էր նաեւ: Սակայն, եթե բոլոր քաղաքական վերլուծաբանները, քաղաքագետները բարձրաձայնում են մտավախություններ, եւ միաժամանակ դա անում է հասարակության ոչ քաղաքականացված մասը, միանշանակ կարելի է տեսնել պատճառը՝ **իշխանության նկատմամբ թերահավատությունը** ցանկացած խնդրի լուծման պարագայում, առավել եւս՝ օբյեկտիվորեն կամ դիտմամբ շրջանառվող ԼՂ հարցի հանդեպ **անվստահությունը**:

Արդեն մեկ տարի հանրությունը, ընդդիմությունն ու միջազգային կառույցներն արձանագրում են Հայաստանում քաղաքական ճգնաժամի, ընդդիմության եւ իշխանության միջեւ լարվածության առկայու-

թյան փաստը, ժողովրդի վատթարացող սոցիալ-հոգեբանական վիճակները, քայլերը՝ ոչ թե դեպի ժողովրդավարություն, այլ՝ հակառակ ուղղությամբ:

Այսպես թե այնպես՝ բոլոր երեք նախագահներն ունեն մեկ միասնական կապող օղակ, կամ խաչմերուկ, դա մարտի 1-ն է: Եվ ուզեն կամ չուզեն ասոցիացիաները ժողովրդի մեջ կան եւ որոշ ժամանակ հետո ժողովուրդը հաստատ ցանկություն կունենա ազատվելու այդ **ասոցիացիաներն առաջացնող կերպարներից**, ու ավելի «մաքուր» ու մեկ կտրուկ փոփոխություն ենթադրող կարգախոսով անձը կարող է համախմբել պառակտված, քայքայված, «հոգևած» եւ շերտավորված հասարակությանն ու ժողովրդին:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏՈՆՏՐՈՎԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ**

### ***Ռիչարդ Կիրակոսյան***

Հայաստանի ամենակարեւոր զարգացումները կապված չեն ոչ ընտրության, ոչ էլ բուն քվեարկության հետ, այլ՝ ընտրարշավի, որն ընթանում էր բացահայտ անհավասար պայմաններում եւ փակ քաղաքական համակարգի առկայությամբ. սրանք առավել կարեւոր խնդիրներ են, քան ընտրակեղծիքների եւ այլ խախտումների հետ կապված մեկօրյա խնդիրները:

Ակնհայտ է, որ հետընտրական ճգնաժամը Հայաստանում, փետրվարի 19-ի նախագահական ընտրություններին հետեւած հանրահավաքների եւ հասարակական բողոքի ալիքից հետո, հանգեցրեց երեք առանձնահատուկ միտման: Առաջինը, որ հետընտրական ճգնաժամը հեռու է ավարտված լինելուց եւ փաստորեն շարունակվում է: Անկախ նրանից, թե ինչ կցանկանան կամ կհայտարարեն Հայաստանի իշխանական թեւի ներկայացուցիչները, ճգնաժամը դեռ առկա է, եւ հնարավորություն չկա վերադառնալ նախընտրական ստատուս քվոյին:

Երկրորդ՝ համապատասխան զարգացումը վերաբերում է Հայաստանի քաղաքական, սոցիալական եւ տնտեսական իրականությանը, ավելի ստույգ՝ հետընտրական ճգնաժամը վերհանեց եւ հաստատեց այսօրվա Հայաստանում աճող անհավասարության եւ եկամուտների ու հարստության (իշխանության, ուժի) անհավասար բաշխվածության նկատմամբ աճող դժգոհությունը, հիասթափությունն ու զայրույթը: Ինչպես նաեւ հետընտրական ճգնաժամը սկսեց ճնշում գոր-

ծաղրել Հայաստանի կառավարության վրա, քանի որ հասարակական դժգոհության մակարդակը բարձրացավ:

Սակայն երրորդ զարգացումը համեմատաբար տարբերվում է մյուսներից եւ բխում է այն փաստից, որ առկա քաղաքական իրավիճակը Հայաստանում շուտով կանգնելու է փոփոխության անհրաժեշտության առջեւ: Առկա քաղաքական իրավիճակը կփոխվի ինքնին, ինչպես նաեւ դրական փոփոխության, բարեփոխումների եւ առաջընթացի արդյունքում: Սա մարտահրավեր է նոր, հետքոչարյանական Հայաստանի ղեկավարության համար՝ շարժվելու առաջ՝ դեպի համաձայնության, այլ ոչ թե վախի վրա հիմնված ավելի բաց եւ արդար քաղաքական համակարգ:

Արտացոլելով Հայաստանի վիճակի իրականությունը՝ քաղաքական երկխոսությունը մնում է որպես իրական ժողովրդավարության միակ ճանապարհը:

Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմամբ եւ անվտանգության կայունությամբ շահագրգռված բոլոր կողմերի համար կարելու մարտահրավեր է այն փաստը, որ ճգնաժամը բավականին հեռու է լուծված լինելուց: Հավասարապես անհանգստացնող է նաեւ, որ կան կենսահույզ մի շարք չլուծված հիմնախնդիրներ, որոնցից հատկապես արժե նշել ունեցվածքի անհավասարության աճը եւ արմատավորված կոռուպցիան:

Եվ ամենից կարելու է այն հանգամանքը, որ Հայաստանի իշխանությունները պետք է լուծեն այդ խնդիրները: Հակառակ դեպքում երկրում աճող սոցիալ-տնտեսական անարդարությունը խթան կհանդիսանա նոր անհանգստության եւ բողոքի ալիքի համար: Ահա թե ինչու տնտեսական աճի վիճակագրական արդյունքները բավարար չեն եւ անհրաժեշտ են լուրջ պարտավորություններ հավասար սոցիալ-տնտեսական զարգացման եւ կոռուպցիայի դեմ հրատապ եւ արդյունավետ պայքարի համար: Այս ամենի անհրաժեշտության ապացույցը ներկա տնտեսական ճգնաժամն է:

Ազգային ժողովը պետք է անմիջապես տեսանելի դառնա՝ որպես հայկական քաղաքականության ծանրության կենտրոն: Այս փոփոխությունը բավականին կարելու է, հաշվի առնելով այսօրվա կենտրոնացված նախագահական իշխանությունը, որն արդեն իսկ սկսել է լիազորությունների փոխանցումը Ազգային ժողովին, որտեղ արդեն իսկ նոր ընդդիմություն է ի հայտ եկել:

Այսպիսով, չնայած ներկա քաղաքական ճգնաժամն ուղղված է նախագահական իշխանության դեմ, իրականում վճռորոշ ճակատամարտը տեղի է ունենալու խորհրդարանի պատերից ներս:



## **ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ. ԱՄՆ ՄՈՂԵԼԻՑ ԲԱՂԱՔԾ ԴԱՍԵՐ**

Այս համատեքստում Հայաստանում եւ ԱՄՆ-ում համեմատական փոփոխության հոգեբանության հետաքրքիր գուգահեռներ կարելի է տանել: Հայաստանի դեպքում քաղաքական փոփոխության հոգեբանության շարժիչ ուժը ժողովրդի արթնացումն է, իսկ սահմանումը՝ անտարբերությունից եւ պասիվությունից հոգնած բնակչությունը: Ամերիկյան քաղաքականության դեպքում Բարաք Օբամայի նախագահական արշավը նույնպես ներկայացրեց փոփոխության օրակարգ, որն ուղղված էր բնակչության մեծամասնությանը՝ խոստանալով Բուշի աշխատակազմի ութ տարիներից հետո փոխել ուղղությունը: Եվ որպես փոփոխության թեկնածու՝ Օբաման ի վիճակի եղավ միավորել եւ արթնացնել Ամերիկայի ժողովրդին, որը ներգրավված չէր քաղաքականության մեջ եւ բավականին անտարբեր էր դարձել:

### **Օբաման որպես փոփոխության գործիչ**

Քառասունվեցամյա սենատոր Բարաք Օբաման՝ որպես Ամերիկայի առաջին աֆրոամերիկացի եւ ԱՄՆ պատմության մեջ ամենաերիտասարդ նախագահներից մեկը, ներկայացնում է հեղափոխական փոփոխություն Ամերիկայի քաղաքականության մեջ: Պարտության մատնելով ավելի քան մեկ տասնյակ թեկնածուների, օգտագործելով հեռացող նախագահ Ջորջ Բուշի հանդեպ եղած դժգոհությունը, ինչպես նաեւ հանդես գալով որպես Իրաքի պատերազմի հանդեպ ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքական «օտարական», Օբաման ձեռք բերեց փոփոխության անհրաժեշտությունը կարեւորող քաղաքական ծրագիր:

Նա կարողացավ համախմբել եւ ոգեշնչել երիտասարդ դեմոկրատներին, իսկ նրա ընտրարշավը ներառեց բազմաշերտ աջակիցներ: Վերջիններիս մեծամասնությունը երիտասարդներ եւ ավելի կրթված մարդիկ էին, ովքեր առավել քան ոգեշնչված էին նրա փոփոխության գաղափարով: Նրա աջակիցները հաղթահարեցին ռասսայական խտրականության խոչընդոտը, քանի որ Օբամայի մաշկի գույնը այլեւս չէր հետաքրքրում մարդկանց:

Օբաման՝ որպես փոփոխության թեկնածու, ոգեշնչեց շատերին իր՝ «կանգնի՜ր հանուն փոփոխության» եւ «այո՛, մենք կարող ենք» արտահայտություններով՝ հիշեցնելով ամերիկացիներին Ջորջ Քենեդիի ժամանակվա հույսի եւ երիտասարդության մասին:

Օբաման, իր իսկ բառերով, «նոր սերնդի» թեկնածուն է, որն առաջարկում է «նոր առաջնորդներ» եւ «նոր տեսակի քաղաքականություն»:

Նրա փոփոխության, հույսի, ապագան անցյալից նախընտրելու ուղերձները (մեսիջները) նույնպես կարող են օգտագործվել հայկական քաղաքականության մեջ:

Նախագահ դառնալուց հետո Օբաման այժմ «պատասխանատվության» կոչ է անում՝ պահանջելով առաջնորդներից հաշվետու լինել, ներառյալ իր անձը, եւ նույնիսկ հրապարակավ ներողություն է խնդրել իր սխալների համար:

## **Հիմնական տարբերությունները**

Օբաման՝ որպես ամերիկյան փոփոխության թեկնածու, ի վիճակի էր համախմբել եւ ոգեշնչել ամերիկացի ընտրողներին՝ առաջարկելով թարմ գաղափարներ եւ խոստանալով իրական փոփոխություն: Ինչո՞ւ էր Հայաստանն այդքան տարբեր: Չնայած Հայաստանի եւ Ամերիկայի՝ փոփոխության կարիք ունեցող քաղաքական իրականության նմանություններին, կան մի քանի կարեւորագույն տարբերություններ.

1. Զվեները նշանակություն ունեն. Հայկական եւ ամերիկյան մոդելների միջեւ առաջին ու հիմնական տարբերությունն այն է, որ Միացյալ Նահանգների քաղաքականության մեջ զվեները նշանակություն ունեն եւ պաշտպանված են: Ամերիկյան ընտրությունների ժամանակ ծագած խնդիրները բացառություններ են, այլ ոչ թե օրինաչափություններ:
2. Տարբեր քաղաքական համակարգեր. Հայաստանում քաղաքական համակարգը «վերելից ներքեւ» է եւ փակ կառուցվածք ունի, որտեղ իշխանությունը կենտրոնացված է նախագահի ձեռքում: Միացյալ Նահանգներում քաղաքական համակարգի իշխանությունը կենտրոնացված չէ միայն նախագահի ձեռքում, այլ բաժանված է մրցակից կառավարման կենտրոնների միջեւ: «Ստուգման եւ հավասարակշռման» համակարգը առողջ եւ դրական մրցակցություն է ստեղծում իշխանության բոլոր երեք ճյուղերի միջեւ. գործադիր ճյուղ, որը կառավարվում է նախագահի կողմից, օրենսդիր ճյուղ կամ Կոնգրես, եւ արդարադատության ճյուղ, որը ներառում է Գերագույն դատարանն ու այլ անկախ դատարաններ եւ արդարադատության մարմիններ: Այս երեք ճյուղերից յուրաքանչյուրն ունի մյուսներին հսկելու իշխանություն եւ իրավունք, որպեսզի որեւէ ճյուղի իշխանության կենտրոնը առավել գերակա չլինի մյուսների հանդեպ:

Այսպիսով՝ քաղաքական համակարգի կառուցվածքն արդեն իսկ ապահովում է օրենքի իշխանության վրա հիմնված ժողովրդավարություն:

### ***Քիզնեսի եւ քաղաքականության տարանջատում***

Երկրորդ կարեւոր տարբերությունն այն է, որ ամերիկյան քիզնես շահը առանձնացված է ամերիկյան քաղաքականությունից, սակայն ունի լոբբինգի եւ մասնակցության միջոցով հասարակական քաղաքականություն մշակելու կարողություն: Այդ գործընթացը անց է կացվում խիստ կանոններով եւ սահմանափակումներով: Կան նաեւ սահմանափակումներ՝ կապված այս կամ այն թեկնածուին նվիրաբերված գումարների հետ:

### ***Իրական քաղաքական կուսակցություններ***

Ի հավելումն կայուն ամերիկյան քաղաքական կուսակցական համակարգի, հայկական եւ ամերիկյան քաղաքական համակարգերը տարբերվում են նաեւ քաղաքական կուսակցությունների դերերով: Հայկական քաղաքական կուսակցությունները, որոնք չունեն իրական տեղային եւ ազգային ներգրավվածություն, մնում են թերզարգացած եւ ոչ հասուն: Շատ քաղաքական կուսակցություններ չունեն գաղափարախոսություն կամ քաղաքական հստակ ծրագիր կամ պլատֆորմ: Այնուամենայնիվ, Միացյալ Նահանգներում վերջին մի քանի տարիների ընթացքում երկու հիմնական կուսակցությունները դարձան գերիշխող: Չնայած այս երկու կուսակցություններից (Դեմոկրատական եւ Հանրապետական) յուրաքանչյուրը տարբերվում է իր քաղաքական գաղափարախոսությամբ, ավելի կոնկրետ սոցիալ-տնտեսական եւ արտաքին քաղաքականության դիրքորոշմամբ, սակայն համակարգը համեմատաբար կայուն է, բայց՝ չափից ավելի կանխատեսելի:

Այս կայունությունն ուղղված է եղել իշխանության բարձր ատյաններում երրորդ կուսակցության առջեւ դռները փակելուն, քանի որ թե հանրապետականների եւ թե դեմոկրատների՝ ներկայիս քաղաքական համակարգը պահելու շահը համընկնում է: Միեւնույն ժամանակ ամերիկացիների մեկ երրորդը իրենց «անկախ» ընտրողներ են համարում:

### **«Ընդդիմության» դերը**

Ամերիկյան համակարգը տարբերվում է նաեւ «ընդդիմության» դերի նշանակությամբ, որը անկախ իր փոքրամասնություն լինելու հանգամանքից, միշտ ի վիճակի է լինում ճնշում գործադրել քաղաքական գործընթացների վրա:

Արդյունքում ընդդիմությունն ընկալվում է որպես քաղաքական համակարգի անհրաժեշտ տարր, եւ քաղաքականություն մշակելու ու երկկուսակցական ոգին պահելու համար ներգրավվում է իշխող կուսակցության կողմից: Նույնիսկ նախագահ Օբամայի՝ իր հակառակորդ Հիլարի Էլիսթոնին պետքարտուղար նշանակելն ի ցույց է դնում գործընթացի հասունությունը: Հայաստանը պետք է գիտակցի, որ ճկուն ու գործուն ընդդիմություն ունենալն առողջ եւ կենսունակ ժողովրդավարության նշան է եւ վտանգ չի ներկայացնում պետության կամ համակարգի համար:

## Վերջաբան

Մարտի 1-ից մեկ տարի անց արդեն հստակ է, որ հիմա Հայաստանը կանգնած է կարելու շրջադարձի առջեւ: Հասարակական հանրահավաքների ժամանակը կարող է ավարտվել, սակայն հիմա արդեն ժամանակն է Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու համար ներգրավվել քաղաքականությանն ու ռազմավարությանը վերաբերող առողջ եւ օրինական քննարկումների մեջ: Ամենից կարելուրն այն է, որ անհնար է վերադառնալ նախկինում եղած ստատուս քվոյին, սակայն պետք է լինի փոխակերպում՝ ժողովրդական բողոքից դեպի քաղաքական ներգրավվածություն կամ մասնակցություն: Հայաստանի «ժողովրդական քաղաքացիները» պետք է հնարավորություն ունենան դառնալու գործուն դերակատարներ, այլ ոչ թե քաղաքական համակարգի կրավորական հանդիսատեսներ:

2008-ի նախագահական ընտրությունների արդյունքում առաջացած հասարակական լարվածությունն ու քաղաքական դաշտի բեւեռացումը, երկխոսության բացակայությունն ու անհանդուրժողականությունը անհրաժեշտաբար առաջացնելու են քաղաքական գործընթացներում հասարակական գործոնի, քաղաքացիների դերի բարձրացման անհրաժեշտություն, հանրային ընկալումների փոփոխություն եւ «նոր ընդդիմության» պահանջարկ:

Այս մեկ տարվա ընթացքում Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների խթանմամբ սոցիալ-հոգեբանական իրավիճակը վատացավ՝ ժողովրդի մեջ առաջացնելով լարվածության պայմաններ՝ հոգեբանական խնդիրների սրվածություն, ֆրոնտրացիաների մի ողջ փունջ, անհարմարվածության, դեպրեսիվ վիճակներ, հոգեհուզական լարվածություն եւ համապատասխան հակազդումներ, սթրեսային վիճակներ ու դրանց տրվող ամենատարբեր հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ՝ ագրեսիա, արտամղում, ժխտում, ռացիոնալի-

զացիա եւ այլն: Եւ մտահոգիչ է, որ դեռ երկար ժամանակ կպահանջվի՝ հաղթահարելու այս որակի հակազդումներն ու համապատասխան վարքագիծը, որպեսզի դրանք չդառնան բնավորության կայուն գծեր եւ հոգեկերտվածքային առանձնահատկություններ մի ողջ ժողովրդի համար:

## ONE YEAR LATER: THE PSYCHOLOGY OF COMPARATIVE CHANGE IN ARMENIA AND THE US

### Introduction

One year after the tragic events of March 1, 2008, Armenia remains challenged by the lingering effects of an unresolved post-election crisis. Although triggered by the February 2008 presidential election, which was widely criticized for being neither free nor fair, the underlying causes of Armenia's post-election crisis include several unresolved problems, ranging from widening socio-economic disparities to a pronounced political polarization.

